

265 անոր բանն է, զոր եւ ամէն երկիր կու տա-
նին, նաեւ ի Լէճ, սաֆի պիլօր: Եւ ասին թէ
ԽՈՒ այր եւ կրն եւ կոյս աղջկունք են, որ
կոյս բանին. այլ եւ զՏիրուն պօնչուխնին,
սուա մէրջան, սուա մարգարիտ. զոր վա-
270 ճառականքն տեղեակ են եւ գնողք գործոյ
նոցա:

ԽԱՆՈՒԹՔ

Եւ այնպէս փարթամ խանութնիք կան
վէնէտիք, որ թէ ԵՄ, ԺՄ զուռուչի էսպապ
գնես, տեղն չերեւնալ. եւ այնպէս հարուստ
275 վաճառականք կան, որ մէկ մարդն մէկ կէ-
մուն պութուն ըոգակն կարէ գնել. որպէս եւ
մեր հեա սօֆ եկել էր ԳՃ բեռ, իրեք օրն
ծախեց, հախլաճմիչ եղաւ, կէսն դրամ, կէսն
ըսկէոլէթ առաւ. զոր յայլ աշխարհ մին տա-
280 րին չկարէր ծախել, անդ իրեք օրն ծախեց:
Այլ եւ բոլոր քաղաքն ամէն արվեստաւորք
են, որ ամէն աշխարհ ինչ բան դժար կամ
թօհվայ ուղենան, անդ գտանեն կամ շինել
տան: Եւ են մարդիք աշխարհին այն յոյժ
285 շնորհալիք, որ այլ աշխարհ չգտանին. միայն
հողի չկարեն տալ. բայց այլ ամէն հունար
կ'ենէ ի ձեռաց նոցա: ԽՈՒ խանութ կայ. եւ
ամէնն (ունին) Աստուածամօր պատկեր եւ
կանթեղ. զի ազգն այն յոյժ պատվեն զԱս-
290 տուածամինն: